# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ

**Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին**

| | |
|---|---|
| Հաստատության լրիվ անվանումը | Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան |
| Հապավումը | ՀՊՃՀ |
| Գործունեության հասցեն | ՀՀ, ք. Երևան, 0009, Տերյան 105 |
| Նախորդ հավատարմագրման մասին որոշումը և ժամկետը | Չի ունեցել |

**ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԸ**

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով՝ ՈԱԱԿ-ի ներկայացուցիչների, փորձագիտական խմբի, գործընթացի ՈԱԱԿ համակարգողի մասնակցությամբ քննարկեց Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի (այսուհետ՝ ՀՊՃՀ) կողմից ներկայացված ինքնավերլուծության, փորձագիտական զեկույցի, զեկույցում նշված թերությունների վերացման մասին ՀՊՃՀ-ի գործողությունների ծրագրի և այդ ծրագրի վերաբերյալ փորձագիտական խմբի կարծիքի հիման վրա կազմված ՀՊՃՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների վերաբերյալ ՈԱԱԿ-ի եզրակացության նախագիծը:

**Քննարկման արդյունքում ամրագրեց հետևյալը.**

Հավատրմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

| | |
|---|---|
| դիմում-հայտի ներկայացում՝ | **07 մարտի 2012** |
| բուհի ինքնավերլուծության ներկայացում՝ | **18 դեկտեմբերի 2012** |
| փորձագիտական այցի իրականացում՝ | **20-24 մայիսի, 27 մայիսի 6 հունիսի, 2013** |
| փորձագիտական զեկույցի ներկայացում՝ | **17 դեկտեմբեր 2012** |
| թերությունների վերացման ծրագրի ներկայացում՝ | **18 փետրվար 2014** |

**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**

***Փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի***

*պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագետների խումբը*[1]: **Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով**[2]:

## ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Գնահատում իրականացնելիս հաշվի է առնվել, որ ՀՊՃՀ-ն պոլիտեխնիկական կողմնորոշմամբ բարձրագույն ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունն է. «կրթական և գիտական ծրագրերի ստեղծումը, իրականացումը և ծառայությունների մատուցումը՝ Հայաստանի Հանրապետության տնտեսության և հասարակության կրթական ու տեխնոլոգիական կարիքները բավարարելու նպատակով, ուսանողներին՝ կյանքին, կարիերայի ընտրությանը, մասնագիտական առաջընթացին նախապատրաստելը՝ փոփոխվող սոցիալ-տնտեսական միջավայրում գործելու համար, նպաստավոր միջավայրի ստեղծումը՝ անհատի համակողմանի զարգացման, ազգային, բարոյական և համամարդկային արժեքների ոգով դաստիարակման համար»: ՀՊՃՀ առաքելության մեջ առանձնակի շեշտադրված չի հետազոտական ուղղվածությունը:

Իր գործունեության ընթացքում համալսարանը հավատարմագրում չի անցել. ՀՊՃՀ-ում որակի ապահովման քաղաքականության հիմքերը դրվել են 1996թ. համալսարանի առաջին ռազմավարական պլանով: Դրանում բերվում են ուսուցման որակի բարձրացմանը նպատակաուղղված հիմնախնդիրները: ՀՊՃՀ-ն չունի հավատարմագրման գործընթացի փորձ, սակայն կրթափորձի ձևով ինքնավերլուծություն առաջին անգամ իրականացվել է մաթեմատիկայի ֆակուլտետում: Հավատարմագրման այս գործընթացը ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծության համալսարանի առաջին փորձն է: Ինքնավերլուծության նպատակը ՀՊՃՀ-ի գործունեության համակողմանի գնահատումն է: Միաժամանակ ինքնավերլուծությունը նպատակաուղղված է ՀՊՃՀ-ի ինքնազարգացման և կատարելագործման գործընթացի խթանմանը:

ՀՊՃՀ-ն իրականացնում է միջին, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության 4 հիմնական կրթական ծրագրեր՝ մասնագետի, բակալավրի, մագիստրոսի և հետազոտողի որակավորման աստիճանների շնորհումով: Բացի նշված հիմնական ծրագրերից, ՀՊՃՀ-ն առաջարկում է նաև լրացուցիչ կրթական ծրագրեր՝ շարունակական կրթության իր կառույցների միջոցով: Համալսարանի մասնագիտացման տիրույթն ընդգրկում է ճարտարագիտության և տեխնոլոգիաների բոլոր հիմնական ճյուղերը, որոնք ներկայացված են ճարտարագիտական, ճարտարագիտատնտեսագիտական պրոֆիլի բակալավրական 44 և 39 մագիստրոսական մասնագիտություններով:

ՀՊՃՀ մասնագիտությունների կրթական ծրագրերը հիմնականում համահունչ են առաքելությանը և համապատասխանում են պետական կրթական չափորոշիչներին, այնուամենայնիվ կան որոշակի խնդիրներ դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման, գրագողության դեմ պայքարի և ուսանողների գիտելիքների գնահատման հետ կապված: ՀՊՃՀ-ում 2012 թվականից կարևորվել է մասնագիտությունների կրթական ծրագրերի վերանայման գործընթացը, որի նպատակը ըստ որակավորումների ակնկալվող

---

[1] **Հավելված 1** ՝ Փորձագիտական խմբի կազմը և ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմը

[2] **Հավելված 2**՝ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏՈՒՄ

վերջնարդյունքների շարադրելն է: ՀՊՃՀ-ն մինչ այդ ունեցել է նման փորձ սահմանափակ քանակի մասնագիտությունների համար:

Հետազոտական ոլորտում ՀՊՃՀ հետաքրքրություններն ու հավակնություններն արտահայտող ռազմավարությունը ներկայացված է ռազմավարական պլանում: Ամբիոնները կատարում են հետազոտություններ, յուրաքանչյուրն իր ուղղվածությամբ, սակայն չկա հետազոտությունների ոլորտի ընտրության հստակ քաղաքականություն: Համագործակցություն կա արտաքին և ներքին շուկայի հետ, այդուհանդերձ առկա է անբավարար ֆինանսավորում: ՀՊՃՀ-ում լիարժեք չէ կապը հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի միջև, ինչը նվազեցնում է բուհի գործունեության արդյունավետությունը:

ՀՊՃՀ-ն արդյունավետորեն համագործակցում է տեղական և միջազգային հաստատությունների և կառույցների հետ: Միջոցառումներ են իրականացվում դասախոսական կազմի վերապատրաստման ու կատարելագործման ուղղությամբ՝ միտված օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացմանը: Սակայն պարզ չէ ինչպես դասախոսական կազմի, այնպես էլ ուսումնառողների՝ օտար լեզվի իմացության մակարդակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքների արդյունավետությունը՝ որպես միջազգային համագործակցության ու փոխանակության ծրագրերի իրականացման կարևոր նախապայման:

ՀՊՃՀ ենթակառուցվածքներն ու ռեսուրսները ներկայումս բավարարում են մասնագիտական կրթության տրամադրման համար: Ինչպես կենտրոնական կրթահամալիրը, այնպես էլ մասնաճյուղերն ունեն մարզական դահլիճներ, մարզադաշտեր: Առկա են նաև գիտաժողովների, սեմինարների, ուսանողական միջոցառումների, ինչպես նաև հեռակոնֆերանսների համար նախատեսված դահլիճներ, որոնք հագեցած են համապատասխան տեխնիկական միջոցներով: Գործում են բուժկետեր, սննդի սպասարկման կետեր, արհեստանոցներ, ուսանողների ժամանցի կազմակերպման վայրեր, լաբորատորիաներ: ՀՊՃՀ-ի գրադարանում առկա է ինտերնետային տեղեկատվական ռեսուրսների օգտագործման գործիքամիջոցների համալրման շարունակական գործընթաց: Սակայն կա հայերեն և անգլերեն ժամանակակից գրականության պակաս: Ուսումնական և ուսումնաօժանդակ մակերեսների ծայրահեղ պակաս կա մասնավորապես Գյումրիում և Երևանում: Առաջընթաց քայլ է առցանց ուսուցման լաբորատորիաների կառուցումը թե Երևանի կրթահամալիրում, թե մասնաճյուղերում:

Համալսարանի 900-ից ավելի հիմնական դասախոսական կազմի մեծամասնությունն ունի գիտական աստիճաններ: Համալսարանում ներկայումս աշխատում է արհեստավարժ և դասավանդման մեծ փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, որը նպաստում է կրթական ծրագրերի հիմնական նպատակներին հասնելուն: ՀՊՃՀ-ն յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանել է պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ, սակայն արդյունավետության տեսանկյունից այդ քաղաքականությունը և մեխանիզմները չեն գնահատվել: ՀՊՃՀ-ում դեռևս չեն հիմնվել հստակ մեխանիզմներ լավագույն մանկավարժական-մեթոդական փորձի արժևորման, ինչպես նաև դասախոսի աշխատանքի խրախուսման նպատակով: Կա վերապատրաստումների իրականացման խնդիր, հատկապես կապված դասավանդման ժամանակակից մեթոդների կիրառման և անգլերեն լեզվի բարելավման տեսանկյունից:

ՀՊՃՀ-ն նախաձեռնում է ուսանողների հավաքագրմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Սակայն մտահոգիչ է հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թվաքանակի անհամեմատ աճը: Այս երևույթի պատճառները ուսումնասիրված և վերհանված չեն, պարզ չէ հեռակա ուսուցման համակարգի ընդունելության չափանիշները:

Ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով ՀՊՃՀ-ում ուսանողների շրջանում դասավանդման որակից, ստացած կրթությունից բավարարվածության վերաբերյալ պարբերաբար հարցումներ են անցկացվում:

ՀՊՃՀ-ում գործող կառավարման համակարգը միտված է առաքելության և նպատակների իրականացմանը: Ռազմավարական նպատակները բավականաչափ գործառնական են, և ներքին շահակիցները (աշխատակազմ և ուսանողներ) ներգրավված են կառավարման տարբեր մարմիններում, այնուամենայնիվ արտաքին շակահիցների հետ հաղորդակցման մեջ կան բացթողումներ: Առկա է տվյալների հավաքման մեխանիզմ, որը, սակայն, դեռևս ամբողջովին ներդրված չէ: ՀՊՃՀ-ում առկա են կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորումներ և որպես դրանց մշտադիտարկման մեխանիզմ՝ սահմանված են տարեկան հաշվետվությունները: Բացակայում է միջնաժամկետ պլանավորումը, ինչի առկայությունը ավելի նպատակային կդարձներ կառավարման համակարգի աշխատանքը:

## ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ

1. ՀՊՃՀ-ի ռազմավարական նպատակները բավականաչափ հստակ և իրատեսական են,
2. Ներքին շահակիցները (աշխատակազմ և ուսանողներ) ներգրավված են կառավարման տարբեր մարմիններում,
3. Ուսումնաօժանդակ կազմը համալրվում է հիմնականում նոր շրջանավարտներով, որոնք ուսումնառության ընթացքում դրսևորել են բարձր առաջադիմություն և համապատասխան որակներ,
4. Առկա է ընդլայնված էլեկտրոնային գրադարան և ուսանողների դրանից գոհ են,
5. Ուսանողների ներգրավվածությունը համալսարանի կառավարման գործընթացներում և խորհուրդներում լավ է համակարգված,
6. Համալսարանում ներկայումս աշխատում է արհեստավարժ և դասավանդման մեծ փորձ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, որը նպաստում է կրթական ծրագրերի հիմնական նպատակներին հասնելուն,
7. Ներքին և արտաքին շահակիցների ակտիվորեն ներգրավված են բուհի որակի ապահովման գործընթացներին:

## ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ

1. Բուհի հետազոտական ուղղվածությունը ամրագրված չէ առաքելության մեջ,
2. Կառավարման համակարգում արտաքին շակահիցների հետ հաղորդակցման մեջ կան բացթողումներ,
3. ՀՊՃՀ-ում առկա է պլանավորման խնդիր,
4. Դասավանդման ժամանակակից մեթոդների ներդրումը կրթական գործընթացում բավարար չէ,

5. Հեռակա և առկա ուսուցման համակարգում հարաբերակցությունը խախտված է, քանի որ վերջին շրջանում նկատվում է հեռակա ուսուցման համակարգում սովորող ուսանողների թվաքանակի անհամեմատ աճ:
6. Գիտահետազոտական աշխատանքներում ուսանողների ներգրավվածության ծավալը բավարար չէ, հիմնականում ներգրավված են ասպիրանտները, իսկ մագիստրատուրայի և բակալավրիատի ուսանողներ ընդգրկվածությունը բավարար չէ:
7. ՀՊՃՀ-ում բացակայում է կապը հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի միջև:
8. Համալսարում առկա է բազային գիտահետազոտական լաբորատորիաների պակաս:
9. Կա դասախոսների վերապատրաստումների իրականացման, ինչպես նաև անգլերեն լեզվի տիրապետման խնդիր:
10. Առկա է ուսումնական և ուսումնաօժանդակ մակերեսների ծայրահեղ պակաս:

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### *Առաքելություն և նպատակներ*

1. ՀՊՃՀ-ի առաքելությունն ու նպատակները դարձնել ավելի հավակնոտ՝ միտված ապագայում հետազոտական համալսարան դառնալուն:
2. Հստակեցնել ռազմավարության մեջ, թե ինչպիսի ինժեների կարիք ունի երկիրը, և բուհը ինչ տեսակի ինժեներ կարող է պատրաստել՝ մասնավորապես տարբերակելով կրթական ծրագրերը շահագործող և հետազոտող ինժեներների համար:
3. Մշակել և կիրառել ռազմավարական նպատակների իրականացման արդյունքների գնահատման, մշտադիտարկման և բարելավման մեխանիզմ, ինչը թույլ կտա ավելի արագ արձագանքել տեղի ունեցած փոփոխություններին և բարելավմանը միտված շտկումներ կատարել պլանների մեջ:
4. Համալսարանում կարիք կա շրջանավարտներից և կրթական ծրագրերից հիմնական գործատու կազմակերպությունների և մասնագիտական ընկերակցությունների բավարարվածության վերաբերյալ համալիր ուսումնասիրություն՝ ծրագրերի արդիականացման և շրջանավարտների մասնագիտական կարողությունների բարձրացմանը միտված երաշխավորությունների մշակման նպատակով: Գործատուների կարիքների բավարարման լավագույն մեխանիզմ կարող է լինել բուհի ստեղծած գիտելիքի շուկայականացումը, և այս ուղղությամբ ՀՊՃՀ-ն դեռ անելիքներ ունի:

### *Կառավարում ու վարչարարություն*

5. Վերանայել ԿՈՎԿ բաժնի զբաղեցրած տեղն և դիրքը ՀՊՃՀ-ի վարչակազմակերպական համակարգում:
6. Մեծացնել ՀՊՃՀ-ի կառավարմանը դասախոսական կազմի և գործատուների մասնակցության աստիճանը և բազմազանացնել մասնակցության ձևերը:
7. Հստակեցնել ՀՊՃՀ-ում իրականացվող գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը, վերլուծումը և կիրառումը գնահատող մեխանիզմները և սահմանել, թե կոնկրետ որ ստորաբաժանումն է իրականացնելու և վերահսկելու այդ մեխանիզմների կիրառությունը:

*Մասնագիտության կրթական ծրագրեր*

8. ՀՊՃՀ-ն պետք է ավելացնի օտարերկրացիների համար նախատեսված ծրագրերի թիվը, ինչը կնպաստի ուսանողների շարժունությանը և ուսումնական գործընթացի միջազգայնացմանը:
9. Մագիստրոսական ծրագրերում ապահովել 120 կրեդիտների բաշխումն ըստ ակադեմիական և գիտական կրթամասերի 50:50 համամասնությունը:
10. Կրթական ծրագրերը ՀՊՃՀ-ի առաքելությանը էլ ավելի համապատասխանեցնելու նպատակով ցանկալի է կատարել հետևյալ քայլերը.
    - ✓ հեռակա ուսուցման արդյունավետ կազմակերպման հարցում կրթական հատուկ գործիքակազմի ապահովում,
    - ✓ միջամբիոնային և միջֆակուլտետային գիտակրթական համալիր ծրագրերի մշակում և իրականացում,
11. Անհրաժեշտ է կիրառել ժամանակակից համակարգչային տեխնոլոգիաները ավարտական աշխատանքներում ու մագիստրոսական թեզերում գրագողությունը բացահայտելու և կանխելու նպատակով:

*Ուսանողներ*

12. Կուրատորական աշխատանքը պետք է արտացոլվի դասավանդողի տարեկան բեռնվածքում, ինչն անկասկած կմեծացնի կուրատորների պատասխանատվությունը և նրանց աշխատանքի արդյունավետությունը:
13. Ստեղծել ուսանողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող համալսարանական պաշտոնական մարմին, օրինակ, համալսարանի օմբուդսմենի ինստիտուտ:

*Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ*

14. Պրոֆեսորադասախոսական կազմի ընտրության մեխանիզմները ավելի հասանելի դարձնել պոտենցիալ արտաքին կադրերի համար:
15. Որակյալ կրթություն ապահովելու նպատակով սահմանել տարբերակված աշխատավարձ դասախոսների համար:
16. ՀՊՃՀ-ում, մասնավորապես երևանյան կրթահամալիրում, դասախոսներին պարտադիր կերպով ներկայացնել ուսանողական հարցումների արդյունքներն ըստ հարցաշարի մանրակրկիտ բովանդակության և դրանք քննարկման դնել ամբիոնի նիստերում:
17. ՀՊՃՀ-ում պրոֆեսորադասախոսական կազմի բնականոն սերնդափոխության նպատակով մշակել գիտամանկավարժական կադրերի պատրաստման հստակ քաղաքականություն: ՀՊՃՀ-ն պետք է ջանքեր գործադրի ասպիրանտական տեղերի թվի զգալի աճ ապահովելու համար:

*Հետազոտությունը և զարգացում*

18. Հիմք ընդունելով գիտելիքահենք տնտեսություն ստեղծելու կառավարության որդեգրած քաղաքականությունը՝ հստակեցնել հաստատության գիտական հետազոտությունների ռազմավարական ուղղությունները:

19. Ապահովել հետազոտության և ուսումնական գործընթացի կապը: Ուշադրություն դարձնել ուսանողների մասնակցությանը հետազոտական աշխատանքներում:
20. Ելնելով բուհի առանձնահատկություններից՝ ավելացնել տնտպայմանագրային հիմունքներով կատարվող աշխատանքների ծավալը:
21. Խթանել գիտական հրապարակումները բարձր ազդեցության գործակից ունեցող միջազգային առաջատար գիտական պարբերականներում:

*Ենթակառուցվածք և ռեսուրսներ*

22. Միջոցներ գտնել մեկ ուսանողին բաժին ընկնող ուսումնական և ուսումնաօժանդակ տարածքները Երևանում և Գյումրիի մասնաճյուղում գործող չափանիշներին համապատասխանեցնելու համար:
23. Ուղիներ գտնել ֆիզիկայի լաբորատորիան ժամանակակից սարքավորումներով արդիականացելու համար:
24. Ստեղծել շենքային և ուսումնական պայմաններ հատուկ կարիք ունեցող ուսանողների համար:

*Հասարակական պատասխանատվություն*

25. Հավասարապես զարգացնել նաև մասնաճյուղերի լրատվության համակարգը, նամանավանդ, որ բոլոր մասնաճյուղերում համացանցի Wi-Fi ազատ գոտի կա:
26. Գնահատել հասարակությանը և պետությանը հաշվետվողականության գործող մեխանիզմների արդյունավետությունը:

*Արտաքին կապեր և միջազգայնացում*

27. Խորացնել օտար լեզվի ուսուցումը և մշակել օտար լեզվի դասավանդման արդյունավետ ձևեր՝ ներառելով նորագույն տեխնոլոգիաները, ինչը կապահովի ինչպես արտասահմանյան ուսանողների ավելի մեծ հոսք, այնպես էլ միջազգային գիտակրթական տարածքում ներքին շահակիցների՝ ուսանողների և դասախոսների շարժունությունը:

*Որակի ներքին ապահովման համակարգ*

28. Որակի ապահովման գործընթացներում ներառել համապատասխան օղակ, որը բացի կրթական ծրագրերից, կիրականացնի նաև համալսարանական ստորաբաժանումների ներքին աուդիտ:

## ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑՈՒՄ ՆՇՎԱԾ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ԲՈՒՀԻ ԾՐԱԳԻՐԸ

***Հայաստանի պետական Ճարտարագիտական համալսարանն ընդունում է, որ փորձագիտական խմբի կողմից տրամադրված խորհրդատվությունները բուհի ռազմավարության շրջանակներում են, և ներկայացրել է «Փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիր և ժամանակացույց» (այսուհետ՝ Ծրագիր):***

Փորձագիտական խումբը, ուսումնասիրելով Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման զեկույցում նշված թերությունների վերացման բուհի մշակած ծրագիրը, **եզրակացնում է.**

Համաձայն Ծրագրի՝ ՀՊՃՀ-ն հանձն է առնում իրականացնել Հավատարմագրման բոլոր տասը չափանիշների տիրույթներում նկարագրված խնդիրների շուրջ փորձագիտական խմբի տրամադրված բոլոր խորհրդատվությունները: Խումբը գտնում է, որ հրատապ փոփոխություններ պահանջող բոլոր խորհրդատվությունները ներառված են Ծրագրում, և ըստ «ՀՊՃՀ գործունեության բարելավման գործողությունների ժամանակացույցի», ռեսուրսներ են տրամադրվելու դրանց իրականացմանը մոտակա երկու տարիների ընթացքում՝ մինչև 2016 թվականի վերջը:

Փորձագիտական խումբը, սակայն առանձնացնում է մի շարք խորհրդատվություններ, որոնց գործողությունները բավարար չափով չեն արտացոլում բուհի կողմից նախատեսված բարելավման քայլերի վերաբերյալ պատկեր: Մասնավորապես՝ **«Առաքելություն և Նպատակներ»** տիրույթում ցանկալի կլիներ, որ բուհը ավելի հստակ նշեր, թե հատկապես ինչն է ճշտելու գործող 2011-2015թթ. ստրատեգիական պլանում, կամ նախատեսում 2016-2021թթ. Ստրատեգիական պլանում: **«Մասնագիտության կրթական ծրագրեր»** տիրույթում Հ բավարար հստակ չի ընկալում մագիստրոսական ծրագրերում գիտական կրթամասի ավելացման անհրաժեշտությունը և բուհի առաջարկած մոտեցումները փորձագիտական խումբը համարում է անուղղակի: **«Ուսանողներ»** տիրույթում նույպես առկա են անհամաձայնություններ, մասնավորապես փորձագիտական զեկույցում **«Ուսանողներ»** չափանիշին վերաբերվող դատողությունների մասում մտահոգություն էր հայտնված ՀՊՃՀ-ի առկա ուսուցման համակարգում ուսանողների թվաքանակի նվազման և հեռակա ուսուցման համակարգում ոսանողների թվաքանակի զգալի աճի վերաբերյալ: Թերությունների վերացման ծրագրում ցանկալի կլիներ տեսնել անդրադարձ վերոհիշյալ խնդրին հեռակա ուսուցման համակարգի ընդունելության չափանիշների վերանայման իմաստով և հեռակա ուսուցման կազմակերպման գործիքակազմին հատուկ ուշադրություն արժանացնելու իմաստով: Բուհի առաջարկած լուծումները երկարաժամկետ են, իսկ խնդիրը հրատապ լուծման կարիք ունի: **«Պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմ»** տիրույթում բացակայում է հստակ գործողությունների ծրագիր, միտված պրոֆեսորադասախոսական կազմի երիտասարդացմանը ինչը պահանջում է մոտեցման հրատապ մշակում: **«Ենթակառուցվածք և ռեսուրսներ»** տիրույթում ՀՊՃՀ-ն նշել է, որ համալսարանի արդիականացված լաբորատորիաների բազայի վրա կստեղծի նոր մեթոդական ցուցումներ՝ ճարտարագետի համար շատ կարևոր ֆիզիկայի ծրագրով նախատեսված փորձերը ժամանակակից սարքավորումների վրա իրականացնելու համար, սակայն փորձագիտական խումբը գտնում է, որ նախատեսված միջոցառումների ծրագիրը հարցի մասնակի լուծում է, այն էլ միայն երևանյան կրթահամալիրի համար: Ցանկալի կլիներ ներառել հրատապ գործողությունների ծրագիր և նախատեսել ֆինանսական միջոցների հայթայթում երևանյան կրթահամալիրում և մասնաճյուղերում ֆիզիկայի լաբորատորիաները ժամանակակից սարքերով ապահովելու համար:

Բոլոր քայլերի համար հստակ նշված են պատասխանատուներ և աշխատանքային խմբեր, տրամադրվող ռեսուրսները: Քայլերի մեծ մասը ներառում են իրատեսական ժամկետներ: Ընդհանուր առմամբ կարելի է եզրակացնել, որ ՀՊՃՀ-ի կողմից ներկայացրած բարելավման պլանում առկա միջոցառումների հաջորդականությունը և ժամանակացույցը տրամաբանական է, բոլոր տիրույթներում առկա են հստակ գործողություններ և քայլեր, բացառությամբ վերը նշված բացթողումների: Հստակ նկարագրված է, թե ինչպես պետք է իրականացնել յուրաքանչյուր քայլը, նշված են պատասխանատուները և գործողությունների իրականացման ժամկետները: Բարելավման պլանից պարզ դարձավ, որ բուհը ընկալել և ընդունել է փորձագիտական խմբի խորհրդատվությունների մեծ մասը:

***Եզրահանգում.*** Բարելավման պլանում առկա քայլերի ավելի կոնկրետ իրականացման պայմաններում մոտակա երկու տարվա ընթացքում բուհը կունենա հնարավորություն բարելավելու համալսարանի գործընթացները կանոնակարգող նորմատիվային դաշտը և կբարելավի հիմնական գործողությունների իրականացումը, որից հետո կարելի է անդրադառնալ դրանց ազդեցության և արդյունավետության գնահատմանը:

Ելնելով վերոգրյալից, ՈԱԱԿ-ը Հավատարմագրման հանձնաժողովին առաջարկում է իր որոշման մեջ ՀՊՃՀ-ի ուշադրությունը հրավիրել հետևյալ կետերի իրականացման վրա՝

1) առաջնահերթ լուծում տալ **Մասնագիտության կրթական ծրագրեր, Պրոֆեսիոնալ-դասախոսական և ուսումնաօժանդակ կազմ, Ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, Որակի ներքին ապահովման համակարգ** ոլորտներում առկա խնդիրներին,
2) «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգի 12 կետով կամ Հավատարմագրման հանձնաժողովի կողմից սահմանված ժամկետներում պարբերաբար ՈԱԱԿ ներկայացնել գրավոր զեկույց իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ,
3) բուհի կողմից ներկայացված փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման ծրագրի վերանայման ժամանակ հաշվի առնել սույն եզրակացության մեջ նշված դիտողությունները ծրագրի վերաբերյալ:

ՈԱԱԿ-ը գտնում է, որ առաջարկվող բարեփոխումները կնպաստեն ինքնավերլուծության զեկույցում ներկայացված համալսարանի հավակնությունների իրականացմանը և հիմք կհանդիսանան հաջորդող գնահատման համար:

**Էդուարդ Ղազարյան,**
**փորձագիտական խմբի ղեկավար**

**Ռուբեն Թոփչյան,**
**ՈԱԱԿ Համակարգող**

**Հավելված 1**

**Փորձագիտական խմբի կազմը.**

- **Էդուարդ Ղազարյան**-ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ ակադեմիկոս, Ռուս-Հայկական (Սլավոնական) Համալսարանի Մաթեմատիկայի բարձրագույն տեխնոլոգիաների ինստիտուտի տնօրեն, խմբի ղեկավար,
- **Դեյվիդ Վուդհաուս**-Արաբական Միացյալ Էմիրությունների Հանրային Հավատարմագրման հանձնաժողովի անդամ, Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների ցանցի հիմնադիր, խմբի անդամ,
- **Գրիգոր Ալավերդյան**- ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ ռադիոֆիզիկայի ֆակուլտետի, Ալիքային պրոցեսների տեսության և ֆիզիկայի ամբիոն ամբիոնի վարիչ, խմբի անդամ,
- **Էդվարդ Դանոյան**- ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետի դեկանի տեղակալ, խմբի անդամ,
- **Լաուրա Սիմոնյան**-Երևանի պետական համալսարանի Ռոմանոգերմանական ֆակուլտետի մագիստրատուրա 1-ին կուրսի ուսանող, խմբի անդամ:

**ՈԱԱԿ-ի աջակցող անձնակազմ.**

- **Ռուբեն Թոփչյան**-ՈԱԱԿ-ի տնօրեն և ՀՊՃՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման համակարգող,
- **Վարդուհի Գյուլազյան**-ՈԱԱԿ-ի Ինստիտուցիոնալ և Ծրագրային Հավատարմագրման բաժնի մասնագետ և համակարգողի օգնական,
- **Արփինե Մկրտչյան**-ԵՊԼՀ Կրթության կառավարման ամբիոնի շրջանավարտ և ՀՊՃՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման քարտուղար-աղագրող,
- **Անի Մազմանյան**–ԵՊԼՀ որակի ներքին ապահովման կենտրոնի մասնագետ և ՀՊՃՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման թարգմանիչ: